ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱԼԱՉՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20 դ. կեսերին, ինչպես ԱՄՆ, այնպես էլ աշխարհի շատ երկրների ժամանակակից գրողների գիտակցության մեջ տեղի ունեցավ հեռացում պատմության ընկալման ավանդական ձևերից ու գաղափարներից: Նոր գաղափարները եկել էին լրացնելու մարդկային կյանքը նոր իմաստով և ժամանակների փոխկապակցության նոր զգացումով: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պատմությունն ընկալվում էր իբրև պարզ երևույթների խախտում: Ցանկացած գործողություն, հուզմունք և պահ դիտվում էր իբրև մի անկրկնելի երևույթ:

Չևն ու ոճը դիտվում էին որպես պայմանական այլափոխություն, որոնք ներկայացնում էին հեղինակի ինքնագիտակցության և ստեղծագործական մտքի մի յուրատեսակ գործընթաց: Գաղափարների արտահայտման ընդունված ձևերը սկսեցին կասկած առաջացնել: Յուրօրինակությունը, ինքնատիպությունը գնահատվում էր իբրև նոր ավանդույթ: Դժվար չէ պարզել ԱՄՆ-ի այս ապաինտեգրման ընկալման պատճառները: Դիտվում էր ինքնության կորուստ զանգվածային ուրբանիզացված հասարակության մեջ: 60-ականների տարաբնույթ բողոքի ակցիաներ, ցասման շարժումներ, վիետնամական տասնամյա կոնֆլիկտ, «սառը պատերազմ». ահա ցնցումների այն շարքը, որոնք տեսավ և վերապրեց ամերիկյան բազմաոճ ու բազմաբնույթ մշակույթը:

Անցյալ դարի 50-ականներից մինչ այսօր անցած ճանապարհը հանգեցրեց ամերիկացիների առավել խոր գիտակցմանը առ այն, որ տեխնոլոգիաներն ինքնին առաջադեմ և օգտակար մի բան են, բայց այն իրենց հետ բերում են վտանգ, որն էլ իր հերթին չափազանց հասանելի է դարձնում նոր կերպարների ներխուժումը գիտակցության մեջ, այն կերպարների, որոնց մուտքը հղի է բազում վտանգներով: Այդ դրությամբ մտահոգված ամերիկացիները սկսեցին այլընտրանքներ որոնել և պոեզիան ընկալել մեկ այլ տեսանկյունից: 70-ականների պոեզիան առաջարկում էր նորացված եղանակներ արտահայտելու սեփական կյանքի փորձը, և թույլ էր տալիս արտահայտել տեխնոլոգիայի և հասարակության զանգվածային ազդեցությունը մարդու մտածելակերպի վրա:

Պատահական չէ, որ ի հայտ էին եկել բազմաթիվ բանաստեղծական ոճեր: Դրանց մի մասը բնորոշ էր առանձին նահանգների, մյուսների գործունեությունը կապվում էր հայտնի պոետական դպրոցների, կամ նշանավոր

բանաստեղծների հետ: Ժամանակակից ամերիկյան պոեզիան առանձնանում է իր ապակենտրոնացվածությամբ, բազմազանության հարստությամբ և չի ենթարկվում ընդհանուր բանաձևերի: Այնուամենայնիվ հարցը ճիշտ պատկերացնելու համար կարելի է այն նկարագրել իբրև մի շրջան, որի մի բևեռում ավանդապաշտներն են (տրադիցիոնալիստներ), կենտրոնում՝ միայնակ բանաստեղծները՝ ում ձայնը խիստ անհատական էր հնչում, և մյուս բևեռում փորձարարական (էքսպերիմենտալիստ) բանաստեղծները: Այս ուղղությունները մասամբ խաչվում էին: Ավանդապաշտները պահպանում էին պոետական ավանդույթը և նրա ժառանգականությունը, կամ ձգտում էին դրան նոր կյանք ներշնչել: Միայնակներն օգտագործում էին թե՛ ավանդական, և թե՛ նորարարական հմտություններ՝ հասնելով պոետական խոսքի անկրկնելիության: Փորձարարականները (էքսպերիմենտալիստներ) ստեղծում էին նոր ոճեր:

Ավանդապաշտ բանաստեղծների թվին են պատկանում ավանդական ձևին և բանաստեղծական խոսքին, տեխնիկային, կայուն չափին փայլուն տիրապետող, մեծ ճանաչում ստացած բանաստեղծներ: Նրանք ծնունդով ԱՄՆ-ի արևելյան ափից էին, կամ հարավից: Դրանք էին Ռիչարդ Էբերխարտը և Ռիչարդ Ուիլբերը, ավագ սերունդի ֆյուդջիտիվիստ բանաստեղծներ Ջոն Կրոու Ռենսոմը, Ադլեն Թեյթը, և Ռոբերթ Պեն Ուորենը, երիտասարդներից կարելի է նշել բավական հասուն բանաստեղծներ Ջոն Հոլանդերին և Ռիչարդ Հաուարդին, այս դասին է պատկանում երիտասարդ Ռոբերթ Լոուելը: Ավանդապաշտ բանաստեղծները մեծ հեղինակություն են վայելում: Նրանց բանաստեղծությունները ընդգրկված են բազմաթիվ անթոլոգիաներում:

Ի տարբերություն շատ փորձարար բանաստեղծների, ավանդապաշտները դիմում են զանազան արտահայտման ձևերի: Նրանք հաճախ հակված են օգտագործել հազվադեպ բառեր, ձգտում են առատորեն կիրառել շատ որոշիչներ և ինվերսիա, այնպես, որ անգլերենի բնականոն խոսակցական շարահյուսությունը անճանաչելիորեն վերափոխվում է: Երբեմն այս ներգործությունը բանաստեղծություններին տալիս է պոետական խոսքի ազնվություն, երբեմն էլ տողը թվում է չափազանց հասարակ՝ կապը խզած իրական անհանգ հուզումների հետ: Որոշ բանաստեղծների բնորոշ ոճական շքեղությունը այնպիսի տպավորություն է թողնում, որ նրանց բանաստեղծություններն ավելի ավանդական են, քան ինքն՝ ավանդույթը:

Այս միտումը կարելի է նկատել Ռենդոլ Ջարելի (1914-1965) գործերում: Նրա հիմնական թեման է լարված երկխոսությունը բնության և մարդկային տեսակի հետ: Ջարելը փորձում է աշխարհը բացահայտել հուսահատ երեխաների, լքված կանանց, մահվան դատապարտված զինվորների, ներսից բխող

գիտակցությամբ: Չնայած ավանդապաշտները լայնորեն օգտագործում են հանգավորումը, սակայն ոչ բոլոր հանգավորված բանաստեղծություններն են ի հայտ գալիս ավանդական թեմայի և ինտոնացիայի ընտրության մեջ: Շատ բանաստեղծներ, ինչպիսիք են Գվենդոլին Բրուկսը, Ռիչարդ Ուլբերը, Ռոբերթ Պենի Ուորենը, Ռոբերթ Լոուելը սկսեցին գրել ավանդապաշտական ոճով, օգտվելով հանգից և չափից, բայց 60-ականներին, հասարակության նոր տրամադրությունների ազդեցության տակ հետզհետե անցան գեղարվեստական ավելի ազատ ձևերին:

ԱՄՆ-ում ճամփորդելիս 50-ականների կեսերին, երբ Ռ. Լոուելը կարդում էր իր բանաստեղծությունները, առաջին անգամ լսեց փորձարար երիտասարդ բանաստեղծների գործերը: Ա. Գինսբերգի "Ոռնոցը" և Հարրի Սնայդերի "Տեքստեր և առասպելներ"-ը դեռ հրատարակված չէին, բայց կարելի էր դրանք լսել շատ անդերգրաունդյան ակումբներում: Երբեմն այդ բանաստեղծությունների ընթերցումներն ուղեկցվում էին ջազային նվագակցությամբ, Սան-Ֆրանցիսկոյի Նորթ Բիչ սրճարաններում: Լոուելը զգաց, որ այս գործերի համեմատ իր բանաստեղծությունները բավական հասարակ են, ռիթմիկ են, լի պայմանականություններով: Բարձրաձայն կարդալով՝ նա տեղում խմբագրում էր դրանք՝ մոտեցնելով այդ ծամանակաշրջանի խոսակցական ոճին: "Ինձ թվում էր, որ իմ բանաստեղծությունները նման էին նախապատմական հրեշների, որոնք խրվել էին ճահիճը և ընկղմվում էին մահվան մեջ, իրենց իսկ զենք ու զրահի ծանրության տակ: Ես արտասանում էի բառեր, որոնք իմ մեջ չէին արթնացնում և ոչ մի զգացում":

Այսպես Լոուելը, ինչպես շատ այլ բանաստեղծներ, ընդունեց պոետական դպրոցի մրցունակ ավանդույթի մարտահրավերը, որի ակունքներում կանգնած էր Վիլյամ Կարլոս Վիլյամսը: Նա ընդունեց այդ մարտահրավերը, որպեսզի նորից սովորի գրել: "Թերևս բանաստեղծներից և ոչ մեկը, բացի Վիլյամսից չէր տեսնում իրական Ամերիկան և չէր լսում նրա ձայնը" - գրում էր Լոուելը 1962-ին: Այս պահից նա որոշակիորեն փոխում է իր գրելաոճը՝ օգտագործելով "ինտոնացիայի, տրամադրության, արագության կտրուկ փոփոխություններ". այն ամենը ինչը նա փոխ էր առել Վիլյամսից:

Լոուելի վերափոխումը մի յուրատեսակ անջրպետ էր հետպատերազմյան պոեզիայի մեջ: Նա ճանապարհ հարթեց շատ բանաստեղծների համար: "Ծոցատետրը" ժողովածուի մեջ 1969թ. և դրան հաջորդող ավելի ուշ գրքերում Լոուելը շարունակում է հետազոտել իր կյանքի ուղին՝ միացնելով այն նորամուծությունների հետ, որոնց միջով նա անցել էր հոգեվերլուծության դասընթացներում: Խոստովանական պոեզիան մեծ ներգործություն ունեցավ նրա ժամանա-

կի բանաստեղծների վրա: Բավական է հիշատակել Ջոն Բերիմենի, Աննա Սեքստոնի, Սիլվիա Պլատի գործերը, որոնք նրա ուսանողներն էին եղել, և որոնց գործերը չի կարելի ընկալել առանց Լոուելի շտկումների:

60-ականներին ի հայտ եկած միայնակ բանաստեղծները մշակել էին բացառիկ ոճ, որը պահպանում էր կապը ավանդականի հետ, բայց դրա հետ մեկտեղ մի նոր քայլ էր դեպի նոր հորիզոններ: Դրանք էին Ջոն Բերիմենը, Թեոդոր Ռոտկեն, Ռիչարդ Հյուգոն, Ֆիլիպ Լեվինը և ուրիշներ: Այս բանաստեղծներին հաջորդեցին փորձարարական պոեզիայի ներկայացուցիչները:

Ռոբերթ Լոուելի և ժամանակակից բանաստեղծների նվաճումները պայմանավորված են մի շարք բանաստեղծների փորձառություններով՝ դեռ 50-ականներից սկսած: Դոնալդ Ալենը առանձնացրեց նրանց "Նոր ամերիկյան պոեզիա" անթոլոգիայում: Անթոլոգիան ընդգրկում էր այն բանաստեղծներին, ում գործերը մինչ այդ արժանացել էին ծաղրի, քննադատների և ակադեմիական շրջանակների կողմից:

Ոգեշնչվելով ջազից և վերացապաշտ էքսպրեսիոնիզմի կերպարվեստից, փորձարարական բանաստեղծները հիմնականում պատկանում էին Լոուելից հետո եկող սերունդին: Նրանց միավորում էր բոհեմական ինտելեկտուալների կենսակերպը, հակամշակութային ապրելակերպը, ովքեր խզել էին կապը համալսարանների հետ և բացեիբաց քննադատում էին "բուրժուական" ամերիկյան հասարակությունը: Այս պոեզիան առանձնանում էր իր շիտակությամբ, յուրօրինակությամբ, ցնցող կատեգորիզմով:

Որոնելով նոր արժեքային կողմնորոշում՝ փորձարարական բանաստեղծները դիմում էին առասպելների, լեգենդների, ավանդական հասարակության հնառոճ աշխարհին, մասնավորապես ամերիկյան հնդկացիների ժառանգությանը: Այն ձևերը, որով նրանք աշխատում էին, բնորոշվում էին իրենց ազատությամբ, անմիջականությամբ, անակնկալությամբ, անսահմանափակությամբ: Բանաստեղծական ձևը բխում էր բուն թեմայի սուբյեկտիվ կոնկրետականությունից, բանաստեղծի ճշգրտությունից, հուզականությունից, տառապանքից: Ինչպես նկատել էր Ալեն Գինսբերգը իր "Իմպրովիզացված պոետիկա"-ում "առաջին միտքը՝ ամենալավ միտքն է": Փորձարարական բանաստեղծներին բնորոշ են հակիրճությունը, մինիմալիզմը: Նրանք մեծ տեղ են տալիս իրենց վառ և անողոք երևակայությանը:

Սան-Ֆրանցիսկոյի դպրոցին պատկանող բանաստեղծները, հիմնականում արևմտյան ափը, իրենց մտածողությամբ պարտական են արևելյան փիլիսոփայությանը և կրոնին, ինչպես նաև ճապոնական և չինական պոեզիային: Դրանում զարմանալի ոչինչ չկա, քանզի արևելքի ազդեցությունը միշտ էլ մեծ է

եղել ամերիկյան արևմուտքի համար: Այստեղի բնությունը հրաշալի է, տպավորիչ է իր գեղեցկությամբ, վեհությամբ և այստեղ ապրող շատ բանաստեղծներ զգում ու ներկայացնում են այդ գեղեցկությունը: Նրանց բանաստեղծությունների մեծ մասը նկարագրում է բնությունը և ճամփորդներին: Այս պոեզիան վեր է հանում ոգեշնչումը ոչ թե գրական ավանդույթի մեջ, այլ բնության:

Չեք Սպայսեր, Լորենս Ֆերլինհետի, Ռոբերթ Դանկեն: Ահա Սան-Ֆրանցիսկոյի դպրոցին պատկանող բանաստեղծները: Շատերն իրենց համարում են բանվորական դասակարգից սերած: Նրանց պոեզիան հիմնականում պարզ է և հասանելի: Սան-Ֆրանցիսկոյի պոեզիայի լավագույն նմուշներում (Հարրի Սնայդեր) տեսնում ենք փխրուն հավասարակշռության պատկերը, որը հաստատվում է մարդու և տիեզերքի միջև:

Ժամանակակից ամերիկյան պոեզիան անհնար է պատկերացնել առանց բիթնիկ բանաստեղծների: Գոյություն չունի հստակ սահման, որը անջատի Սան-Ֆրանցիսկոյի դպրոցը բիթնիկ բանաստեղծներից: Որպես խումբ բիթնիկները ձևավորվեցին 50-ականներին: Բիթնիկների ամենակառուցողական դեմքերը արևելյան ափից էին, որոնք տեղափոխվել էին Սան-Ֆրանցիսկո և հենց այստեղ իրենց առաջին քայլերն էին անում, ստանալու ազգային ճանաչում: Առավել տաղանդավորներն էին Ալեն Գինսբերգը, Գրեգորի Կորսոն, Չեք Քերուակը, Վիլյամ Բերոուզը:

Բիթնիկների պոեզիան հիմնված էր հնչեղության վրա, հագեցած էր կրկնություններով և չափազանց ազդեցիկ էր բարձրաձայն ընթերցելիս, քանի որ հիմնականում այն կարդացվում էր (անդրգրաունդյան) ստորգետնյա ակումբներում: Հայտնի չափով այն կարելի է համարել ռեփի մեծ նախաձնող, որը դարձավ գերիշխող ուղղություն 90-ականների երաժշտության մեջ: Բիթնիկների պոեզիայում մեծ մասամբ կենտրոնացվել էր ամերիկյան հասարակության մեջ գերիշխող արժեքների բացասման պաթոսը: Բայց այս կտրուկ բառերի տակ թաքնված էր սերը դեպի հայրենի երկիրը: Բիթնիկների բանաստեղծությունները ցավի և ցասումի ճիչ էին, "ազնվությունը կորցրած ԱՄՆ-ի, նրա մարդկային և բնական ռեսուրսների ողբերգական վատնումը տեսնելիս":

Այնպիսի բանաստեղծություններ, ինչպիսիք էին Ալեն Գինսբերգի "Ռռնոցը" մի իսկական հեղափոխություն էին պոեզիայում: Նյու-Յորքյան պոետական դպրոցին պատկանող հեղինակները, ի տարբերություն բիթնիկների և Սան-Ֆրանցիսկոյի բանաստեղծների, քիչ էին հետաքրքրվում հուզիչ բարոյական հարցերով և ընդհանուր առմամբ իրենց հեռու էին պահում քաղաքականությունից: Ինչ վերաբերվում է ակադեմիական կրթությանը, նյույորքյան դպրոցը մի գլուխ բարձր էր ժամանակակից այլ հոսանքներից: Այս դպրոցի առավել վառ

ներկայացուցիչներն են Ջոն էշբերին, Ֆրենկ Օ՛Հարան, Քենեթ Կոխը: Նրանք ծանոթացել էին Հարվարդում ուսանելիս: Այս բանաստեղծների գործերը տարբերվում էին ծայրահեղ քաղաքացիականությամբ, սառնությամբ, ընդգծված անկրոնականությամբ: Նրանց բնորոշ է թեմաների արագ փոփոխությունը բանաստեղծության ներսում, ուրբանիստական տարրերի առատությունը, անմիավորելիի միավորումը, և ֆիզիկական հեռացումը ցանկացած ընդունված դավանանքներից:

Նյու-Յորքը ամերիկյան արվեստի զարգացման գլխավոր կենտրոնն է: Այստեղ է ծնվել վերացական էքսպրեսիոնիզմի ուղղությունը գեղանկարչության մեջ, որը դարձավ ուրբանիստ բանաստեղծների ներշնչման հիմնական աղբյուրը: Նրանց մեծ մասն աշխատել է տարբեր ամսագրերի արվեստի բաժիններում, թանգարաններում, համագործակցել է նկարիչների հետ:

Դեռ 20-ականներին Թ.Ս. Էլիոտը, Ուոլլես Ստիվենը, Էզրա Փաունդը փորձում էին ամերիկացիներին պատվաստել խորհրդանշական տեխնիկան՝ սյուրռեալիզմը, բայց այն այդպես էլ չաճեց ամերիկյան պոեզիայի մեջ: Միայն 60-ականների ցնցումների ազդեցության տակ՝ կապված վյետնամական պատերազմի հետ, սյուրռեալիզմը, ինչպես նաև էգզիստենցիալիզմը ԱՄՆ-ում "քաղաքացիություն" ստացան: Սյուրռեալիզմը եվրոպական պոեզիայի և մտքի հիմնական ուղղություններից մեկն էր երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ և հետո: Այնպիսի սյուրռեալիստ բանաստեղծներ ինչպիսիք են Ու. Ս. Մերվինը, Ռոբերթ Բլայը, Չարլզ Ռայթը դիմեցին ֆրանսիական և հատկապես իսպանական սյուրռեալիստներին, ում բանաստեղծությունները լի էին մաքուր զգացմունքայնությամբ, արքետիպիկ կերպարայնությամբ, հակառացիոնալ, մարդկային վարքի էգզիստենցիալ մոդելներով: Քաղաքական սյուրռեալիզմի համար բնորոշ է ամերիկյան արժեքների կտրուկ, սուր քննադատությունը և ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը վյետնամական պատերազմի ժամանակ:

Ընդհանուր առմամբ, սյուրռեալիզմը եթե վառ, ակնառու կերպով չազդեց շատ բանաստեղծների ստեղծագործությունների վրա, ապա այն ինչ-որ չափով արտացոլվեց նրանց գործերում:

Գրականության շրջանակի կանայք, ազգային փոքրամասնությունները և սյուրռեալիստները գիտակցեցին, որ 60-ականներին իրենք որոշակի ուժ են կազմում ԱՄՆ-ի հասարակական բեմի վրա: Ամերիկյան և այլ երկրների գրականության մեջ, երկար ժամանակ գործում էին տղամարդկանց կողմից մշակված ստանդարտներ: Համաձայն այդ չափանիշերի տղամարդիկ հակված էին թերագնահատել, արհամարհել կանանց ներդրումը հասարակության կյանքում:

Այնուամենայնիվ շատ կանայք զգալի հետք թողեցին ամերիկյան բառարվեստի վրա: Նրանք ամենևին էլ ֆեմինիստներ չէին, և այն խնդիրները, որ նրանք բարձրացնում էին ամենևին էլ չէին վերաբերվում կանանց հարցերին: Ավելի հաճախ նրանք գրում էին համամարդկային արժեքների մասին: Նույն կերպ տարածքային, քաղաքական, ռասսայական տարբերությունները իրենց հետքն էին թողել նրանց աշխատանքների վրա և խոր մտորումների առիթ տվել: Առավել աչքի ընկնող կին բանաստեղծներից էին Էմի Կլեմպիտը, Լուիզա Գլյուկը, Օդրի Լորդը, Գերտրուդ Շնակենբուրգը և շատ ուրիշներ:

Ամերիկյան գրականության նոր ուղղություններից մեկին կարելի է դասել 'լեզվի բանաստեղծներին": Արժանի է հիշել Բրյուս Էնդրյուսին, Լին Խեջինյանին, Դուգլաս Մեսերլիին՝ "Լեզվի պոեզիան. անթոլոգիայի փորձը" ժողովածուի խմբագրին: Այս ուղղության բանաստեղծները ձևափոխում էին լեզուն՝ բացահայտելով նրա ընդունակությունը ստեղծելու երկակի իմաստներ, դրվագներ, պատառիկներ և քառսից ինքնակազմակերպում:

Ուսումնասիրելով արվեստը և գրական քննադատությունը որպես այնպիսի երևույթներ, որոնք իրենց իսկ բնույթով գաղափարախոսական են, այս դպրոցին պատկանող բանաստեղծները բացառում են մոդեռնիզմին բնորոշ փակ ձևերը, այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են ժանրը, կանոնիկ տեքստը, այսինքն ճանաչված գրական գլուխգործոցները: Դրա փոխարեն նրանք ուզում են տեսնել բաց ձևեր և բազմամշակութային տեքստեր: Նրանք փոխառում են փոփ մշակույթի, ՁԼՄ-ի կերպարներ և վերստեղծում դրանք նորից: Ինչպես և պերֆորմանսի լեզուն "Լեզվի պոեզիան" հակադրվում է վերծանությանը և պահանջում է ենթերցողից ուղղակի կարեկցանք:

Ձազային իմպրովիզացիաները, արվեստի բազմաթիվ լրատվամիջոցների գործերը և եվրոպական սյուրռեալիզմը ազդեցին շատ ամերիկյան բանաստեղծների գրական գործունեության վրա: Լորի Անդերսոն. այս ժանրում ամենահայտնի անունը: Նրա հիթը "ԱՄՆ", (1984), որը ստացավ համաշխարհային ճանաչում, ստեղծված է, օգտագործելով այնպիսի միջոցներ, ինչպիսիք են կինոն, տեսաֆիլմը, ձայնային, աղմկալի էֆեկտները, երաժշտությունը, խորեոգրաֆիան և տիեզերական դարի տեխնոլոգիաները: Ձգայուն պոեզիայով, որտեղ ձայնը և գործիքավորումը, գործիքային ուղեկցությունը առանձնահատուկ տեղ են զբաղեցնում, զբաղված էին Դեվիդ Էնտին և Նյույորքցի Ջորջ Կուաշը՝ "Ստեյշն Հիլ Փրեսի" տնօրենը: Մաքլոուն զբաղվում էր վիզուալ կամ կոնկրետ պոեզիայով, որը հիմնված է տեսողական ընկալման այնպիսի հնարների վրա, ինչպես թղթի վրա տեքստի դասավորումն ու հավաքվող տառաչափերի խաղն է: Էթնիկ պոեզիան միաձուլվեց ռեփ երաժշտության հուսքի հետ,

երբ ողջ ԱՄՆ-ում պոետական հավաքույթները, հասարակական գրական ընթերցումները, որոնք կազմակերպվում էին այլընտրանքային գեղարվեստական թանգարաններում և գրախանութներում, դարձել էին միանգամայն տարածված ոչ թանկարժեք զվարճաքներ:

Պոետական մյուս բևեռում հավաքվել էին "Նոր ֆորմալիստները", ովքեր միավորված էին հին ձևին, չափին, ճիշտ հանգին վերադառնալու միտումով: ֆորմալիտական դպրոցը զուգորդվում է "Սթորի լայն փրես" հրատարակչության հետ: Այս դպրոցին են պատկանում Դան Ջիոյանը, բանաստեղծ և գործարար, Ֆիլիպ Դեյսին և Դեվիդ Զաուսը "Ծայրահեղ միջոցներ. ավանդական ձևերով ստեղծվող ժամանակակից ամերիկյան պոեզիան" (1986) անթոլոգիայի բանաստեղծներն ու խմբագիրները: Չնայած այս անթոլոգիայում ընդգրկված բանաստեղծներին հաճախ մեղադրում էին, որ նրանք վերադառնում են 19 դարի թեմաներին, նրանք իրենց գործունեության մեջ միավորում են տողերի և կերպարների արդիականությունը լեզվի երաժշտականության և փակ ձևերի ավանդապահությամբ: